

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ, ՂՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ն. Գ. ՀՈՎՍԵԹՅԱՆ

Խորհրդայնացման գործընթացը հայկական տարածքներից յուրաքանչյուրում իր յուրահատկություններն է ունեցել: Տարբեր ժամանակներում և տարբեր կերպ իրականացված խորհրդայնացման գործընթացը զգալի բացասական հետևանքներ ունեցավ այդ տարածքների ճակատագրի շուրջ ծավալված հետագա զարգացումների վրա: Ղարաբաղի խորհրդայնացման ընթացքը էականորեն տարբերվում է հայկական այլ տարածքների խորհրդայնացումից:

1920 թ. ապրիլ-մայիսը դրամատիկ իրադարձություններով էր հագեցած ինչպես ողջ հայության, այնպես էլ, մասնավորապես, նրա արցախյան հատվածի համար: Շուշիի հայության կոտորածը արցախահայությանը սթափեցրեց, հարկավոր էր ի մի բերել ուժերը և պաշտպանվել: Անկախ մեր պատմագրության մեջ առկա կարծիքներից՝ անժխտելի է, որ հենց դրա շնորհիվ կասեցվեց Ղարաբաղի այլ բնակավայրերում հայերի ջարդերը, որոնք, տրամաբանորեն, պետք է հետևեին Շուշիի դեպքերին: Սա նաև այս դրամատիկ ժամանակահատվածի այն եզակի պահերից էր, երբ Հայաստանի Հանրապետությունը գործնական քայլեր էր ձեռնարկում Ղարաբաղում իրավիճակը կարգավորելու ուղղությամբ: Արցախահայությանն օժանդակելու համար իրենց գորաջոկատներով այստեղ էին եկել Դրաստամատ Կանայանը և Գարեգին Նժդեհը: Ձեռնարկված քայլերի արդյունքները չուշացան: Ղարաբաղում գործող տարբեր կուսակցությունների ցերեկայացուցիչների ընդգրկմամբ ձևավորվեց Ղարաբաղի կառավարությունը: Ապրիլի 23-ին Թաղավարդ գյուղում կայացավ ժամանակավոր կառավարության առաջին նիստը, որտեղ հստակ ներկայացվեց Ղարաբաղի կողմնորոշման հարցը, ըստ որի՝ այն՝ «երբեք, ոչ մի պայմանով, հնարավոր չի համարում գտնվել Ադրբեջանի սահմաններում: Նա պետք է միանա ընդհանուր հայությանը՝ կազմելով Հայաստանի Հանրապետության անբաժան մասը»¹: Այս մոտեցումներն ավելի են ամբողջականացվում և հստակեցվում ապրիլի 25-29-ը Թաղավարդում կայացած արցախահայության 9-րդ համագումարում, որտեղ ձևակերպվեց՝ Լեռնային Ղարաբաղը հռչակել Հայաստանի Հանրապետության անբաժան մաս²:

Թվում էր՝ հասել է Արցախի հարցը վերջնական և արդարացի լուծելու պահը, սակայն տարածաշրջանում կատարված փոփոխությունները բուրբոկին այլ ուղղությամբ տարան դեպքերի զարգացումը: 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումով տարածաշրջանում աշխարհաքաղաքական խաղի մեջ ներգրավվեցին նոր և ազդեցիկ մասնակիցներ՝ ի դեմս Խորհրդային Ռուսաստանի և քենալական Թուրքիայի: Նոր իրավիճակում հայ ժողովրդի, մասնավորապես նրա արցախյան հատվածի ճակատագիրն էապես կախված էր այս երկուսի փոխհարաբերություններից:

¹ Հ. Մ. Հարությունյան, Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թթ., Եր., 1996, էջ 232:

² Տե՛ս Հ. Աբրահամյան, Արցախյան գոյամարտ, Եր., 1991, էջ 98:

Ռուսաստանը և Թուրքիան, որ պատմության ընթացքում ավելի հաճախ հանդես էին գալիս որպես հակառակորդներ և դրա համար ունեին առավել քան հիմնավոր պատճառներ³, քննարկվող կայր ժամանակահատվածում երկուստեք դաշնակցելու փոխադարձ կամեցողություն ցուցաբերեցին: Ընդ որում՝ Թուրքիան Ռուսաստանի հետ իր այդ «բարեկամությունն» ու իր արևելյան սահմանների հարցը դիտարկում էր ոչ այլ կերպ, քան Բրեստ-Լիտովսկի հայտնի պայմանագրի տրամաբանությամբ⁴, ինչը, բնականաբար, արդեն իսկ իրական վտանգի հեռանկարներ էր պայտունակում հայկական կողմի համար:

Եվս մեկ հետաքրքիր մանրամասն: Անգամ այն ժամանակ գաղտնիք չէր, որ Թուրքիայի մտահոգացմամբ Անդրկովկասում Ադրբեջան անունով պետության ստեղծման նպատակներից մեկն այստեղ ռուսական ազդեցության տարածմանը խոչընդոտելն էր⁵: Խորհրդայնացման փաստով, ըստ էության, վերացվեց Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը: Ստեղծելով նոր, արդեն խորհրդային պետություն՝ Խորհրդային Ռուսաստանը նրա անվան մեջ պահպանեց «Ադրբեջան» անունը: Ռուսաստանը, փաստորեն, վավերացրեց «մեծ Ադրբեջան» ստեղծելու թուրքական գաղափարը: Բնականաբար, սրանցից յուրաքանչյուրը դրա համար ուներ իր դրդապատճառները, եթե Թուրքիան «մեծ Ադրբեջանի» ստեղծումը համարում էր պանթուրքական «ազգային իդեալների» իրականացմանն ուղղված ևս մեկ քայլ, ապա Խորհրդային Ռուսաստանը այն համարում էր հեղափոխությունն Արևելք «արտահանելու» ցատկահարթակ: Երկու դեպքում էլ տուժելու էին Ադրբեջանի հարևանները, առաջին հերթին՝ Հայաստանը և Իրանը, քանի որ «մեծ Ադրբեջանը» պետք է ստեղծվեր ի հաշիվ հարևան երկրների տարածքների: Այլ կերպ ասած՝ Խորհրդային Ադրբեջանի հռչակման փաստով հայկական մի շարք տարածքների կորուստն արդեն իսկ կանխորոշված էր: Ընդ որում՝ այս պարագայում հայ ժողովուրդը դրան հակազդելու գրեթե ոչ մի հնարավորություն չուներ:

Հայկական պատմագրության մեջ հաճախ ենք հանդիպում պնդումներ, թե հայությունը ոչինչ չէր կորցնի և անգամ հակառակը՝ կշահեր, եթե Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո Հայաստանը ևս խորհրդայնացվեր⁶: Առաջին հայացքից, կարծես, այո, մնան տեսակետը տրամաբանական է: Սակայն հետագա զարգացումները հակառակն են ապացուցում. արյո՞ք Խորհրդային Ռուսաստանն այդ պահին նպատակահարմար էր գտնում Հայաստանի խորհրդայնացումը, կամ արյո՞ք խորհրդայնացումը շահեկան կլիներ Հայաստանի նկատմամբ տարվող քաղաքականության մեջ: Դեպքերի զարգացումը հակառակն է հուշում: Հիշենք, որ հայկական մեծ տարածքներ պաշտոնապես կորցրեցինք ոչ թե Հայաստանի Առաջին Հանրապետության, այլ արդեն Խորհրդային Հայաստանի օրոք: Վստահորեն կարող ենք պնդել, որ Ռուսաստանը տվյալ պահին աննպատակահարմար էր գտնում Հայաստանի խորհրդայնացումը և առավել ևս՝ այդ գործում թուրքական ուժերի ներգրավումը: Բավական է միայն նշել, որ հենց թուրքական կողմն էր իր օգնությունն առաջարկել «խմպերալիստական» Հայաստանի դեմ պայքարելու համար.

³ Տե՛ս Լ. Խորշուղյան, Հայոց ազգային գաղափարախոսությունը, Եր., 1999, էջ 83:

⁴ Տե՛ս Կ. Սարդարյան, Հայ-վրացական հարաբերությունները 1918 - 1920 թթ., Եր., 2002, էջ 127:

⁵ Տե՛ս Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 252:

⁶ Տե՛ս Ա. Եսայան, «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Եր., 1965, էջ 350:

բայց Ռուսաստանը չէր ընդունել այն⁷: Այդ մասին բավական պարզ ու հստակ նշված է 1920 թ. ապրիլի 26-ին Մ. Զեմալի՝ Լենինին ուղարկած նամակում⁸: Դեռ ավելին՝ հենց նույն Խորհրդային Ռուսաստանի միջամտության շնորհիվ Թուրքիան 1920 թ. ամռանը դադարեցրեց Հայաստանի Հանրապետության դեմ արշավանքի նախապատրաստությունները⁹: Այս փաստն ավելի ուշ ընդգծում է նաև ՌՍՖՍՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը չ՛հ վարչապետ Համո Օհանջանյանին ուղղված հեռագրում:

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարներին խորք չէր նոր անվան տակ նախկին Ռուսական կայսրության տարածքները միավորելու գաղափարը: Այս պարագայում, երբ Ռուսաստանը բավական լուրջ խնդիրներ ուներ Արևմտյան ճակատում և ներքին, հակաբոլշևիկյան ուժերի դեմ մղվող պայքարում և չէր կարող հարկ եղած ուժեր կենդանացնել Կովկասում, կողմնակից չէր այստեղ լայնամասշտաբ գործողությունների ծավալմանը: Իսկ Հայաստանի խորհրդայնացումը, առավել ևս այդ գործընթացում Թուրքիայի ներգրավումն անկանխատեսելի հետևանքներով էր հղի:

Ղարաբաղի խորհրդայնացման հարցում ևս ամեն ինչ այնքան պարզ չէ, որքան քվում է առաջին հայացքից: Նախ՝ իրականում ե՞րբ է խորհրդայնացվել Ղարաբաղը, ապրիլի 29-ի՞ն, ապրիլի երկրորդ կեսի՞ն, երբ Դրոն ու Նժդեհը, իշխանությունը տեղի բոլշևիկներին հանձնելով, հեռացան Ղարաբաղից, թե՞ մայիսի 28-ին, երբ Ադրբեջանից բոլորովին անկախ և նրանից ամբողջովին տարբեր հանգամանքներում արցախահայության 10-րդ համագումարը Ղարաբաղը հռչակեց խորհրդային: Ընդ որում, Ղարաբաղի՝ հայկական տարածք լինելու և տվյալ պահին հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվելու փաստն իրենց փոխադարձ գրագրություններում հաստատում էին նաև Խորհրդային Ռուսաստանի գործիչները: Ինչ վերաբերում է խորհրդայնացման ժամկետներին, ապա առավել ընդունելի է 1920թ. մայիսի 28-ը, երբ Ղարաբաղի խորհրդայնացման փաստը ամրագրեց Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը՝ ներկայացուցչական մի մարմին, որն իրավասու էր նման կարևոր որոշում կայացնել: Իսկ «դե ֆակտո» դա եղել էր ավելի վաղ, երբ Դրոն Ղարաբաղում իշխանությունը հանձնեց տեղի հայ բոլշևիկներին և հեռացավ: Ընդ որում, միմյանցից բոլորովին անկախ և մինչև իսկ հակոտնյա բազմաթիվ աղբյուրներ հաստատում են, որ այդ որոշումը չէր հակասում Ղարաբաղի հայության կամքին:

Հարցերի մեկ այլ խումբ վերաբերում է Ղարաբաղի խորհրդայնացման, այսպես ասած, ամխոսապիտիությանը: Անվիճելի է, որ Խորհրդային Ռուսաստանն այդ պահին գերադասում էր ձեռնպահ մնալ Անդրկովկասում նոր տարածքներ խորհրդայնացնելու հեռանկարից և դրա համար ուներ բազմաթիվ պատճառներ: Ադրբեջանի խորհրդայնացումից շատ չանցած՝ նույն Ռուսաստանը բանակցություններ է սկսում Հայաստանի և Վրաստանի ոչ խորհրդային կառավարությունների հետ: Դեռ ավելին, անգամ Հայաստանում բոլշևիկների մայիսյան ապստամբության պահին Խորհրդային Ռուսաստանը ձեռնպահ մնաց չ՛հ-ի դեմ ուղղակի քայլերից¹⁰, չնայած այդ առթիվ հնչած առաջարկներին, և գերադասեց բավարարվել

⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., քաղաքական պատմություն. փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 2000, էջ 206-207:

⁸ Տե՛ս Լ. Խորշուդյան, Հայաստանի բաժանումը 1920 թ., Եր., 2002, էջ 14-15:

⁹ Տե՛ս Է. Ա. Չոիրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 1979, էջ 43:

¹⁰ Տե՛ս “Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и материалы”, т. 1, М., 2008, էջ 437:

պարզապես ՀՀ կառավարությանը նոտաներ հղելով: Իսկ Հայաստանի տարածքներ մտած ռուսական ուժերը ետ քաշվեցին: Այս փաստը հուշում է, որ Խորհրդային Ռուսաստանն այդ պահին Կովկասում խոշորամասշտաբ գործողությունների չէր ձգտում: Մանավանդ, հեռանկարում չէր բացատվում այդ գործողություններում Թուրքիայի ներգրավումը:

Եվ հանկարծ նման իրավիճակում խորհրդայնացվում է բնիկ հայկական մի մեծ տարածք՝ Լեռնային Ղարաբաղը: Դա անսպասելի, առավել ևս պատահական երևույթ չէր: Հայկական կողմը դեռ 1920թ. ապրիլի վերջերին արդեն հավաստի տվյալներ ուներ նման զարգացումների մասին: Ասեմք, որ դա բխում էր հենց նույն ռուսական քաղաքականության տրամաբանությունից. Խորհրդային Ռուսաստանին ուղղակի կապ էր անհրաժեշտ Թուրքիայի հետ, և դրա ամենակարճ տարբերակներից ցանկացածն անցնում էր հայկական տարածքների վրայով: Որ անհետաձգելի հռչակված քեմալաբուլճիկյան «կամուրջն» ամենայն հավանականությամբ պետք է անցներ հենց հայկական տարածքներով, գաղտնիք չէր նաև Հայաստանի ղեկավարության համար: Ավելի հստակ՝ Ադրբեջանի խորհրդայնացման հաջող օրը՝ ապրիլի 29-ին, Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը հաղորդագրություն է ուղարկում ՀՀ արտգործնախարարությանը, որ Կարմիր բանակն ու քեմալականներն ամենայն հավանականությամբ միմյանց հետ կապ կհաստատեն Ղարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան գոտու վրայով¹¹:

Եվ ահա մայիսի 11-ին Կովկասյան ճակատի հրամանատարությունը 11-րդ կարմիր բանակին հրաման է տալիս «ազգամիջյան բախումներ թույլ չտալու նպատակով» իր հսկողության տակ առնել Նախիջևան-Օրդուբադ-Շուշի գոտին՝ մինչև Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային հարցերի վերջնական ճշգրտումը¹²: Շատ չանցած՝ Երևան է գալիս նաև դրա դիվանագիտական հիմնավորումը, մայիսի 28-ին ՌՄՖՍՀ ղեկավարությանն ուղղված իր հեռագրում արտգործոժողկոմ Չիչերինը տեղեկացնում է, թե ՀՀ-ի հետ կայանալիք բանակցություններում պահանջելու է ռուսական զորքերի կողմից ՀՀ-ի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքների վերահսկումը: Միաժամանակ նա մտահոգություն է հայտնում, թե բավարարուժների բացակայության պարագայում անհնար կլինի նման պահանջներ առաջ քաշել¹³:

Մեկ օր անց՝ մայիսի 29-ին, նույն հասցեով Չիչերինի ուղարկված գաղտնի գրության մեջ հակամարտող ազգությունների միջև հաշտարարի մարդասիրական դերի ստանձնումից բացի արտգործոժողկոմը նշված տարածքների՝ ռուսական զորքերի կողմից գրավման անհրաժեշտությունը հիմնավորում է ևս մեկ «եական» փաստով. «Դրանց զբաղեցումը մեզ թուրք ազգայնականների և Պարսկաստանի հետ ուղղակի կապի հնարավորություն կտա»¹⁴: Եվ թող չքվա, թե դա Չիչերինի հղացած գաղափարն էր, այդ գրությանն ի պատասխան՝ մայիսի 31-ին նրան վստահեցնում են, որ հենց նույն նպատակով դեռ մայիսի 11-ին Կովկասյան հրամանատարությունը 11-րդ բանակին հրաման էր տվել իր հսկողության տակ առնել նշված շրջանները¹⁵:

¹¹ Տե՛ս «Нагорный Карабах в 1918-1923 гг.», Ер., 1992, էջ 425-426:

¹² Տե՛ս «Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и материалы», էջ 437:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 442-443:

¹⁴ Նույն տեղում, էջ 443:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 444:

Իսկ ի՞նչ էր կատարվում այդ պահին բուն Ղարաբաղում: Աղբբեջանի խորհրդրդայնացման հենց հաջորդ օրը «Ղարաբաղի գեներալ-նահանգապետ» Աուլթանովը մի գիշերվա մեջ դարձավ բոլշևիկ՝ իր ավագակախումբը հռչակելով Ղարաբաղի հեղկում. իսկ իրեն՝ հեղկոմի նախագահ¹⁶: Դա բողոքի ալիք բարձրացրեց արցախահայության շրջանում: Մայիսի սկզբներին այդ առթիվ բողոքի մի մամակ ուղարկվեց Լեոնինին. «Ղարաբաղի 360 հազարանոց հայությունը երեք տարի պայքարել է խանաբեկական Աղբբեջանի և Թուրքիայի դեմ: Եվ կրկնակի եռանդով կշարունակի պայքարը, մինչև Ղարաբաղի սահմաններին կմոտենան հեղափոխությանը հավատարիմ Խորհրդային Ռուսաստանի զավակները»¹⁷: Այստեղ հստակ նկատելի է մի նոր նրբություն. ռուսական զորքերի հնարավոր մուտքը եթե ոչ բարեկամաբար, ապա բավականին հանգիստ էր ընդունվելու Ղարաբաղի հայության կողմից: Եվս մեկ հանգամանք. փաստերը վկայում են, որ ոչ միայն տեղի հայ բոլշևիկները, այլև Ղարաբաղի հայության մեծ մասը բարյացակամորեն կամ, համենայնդեպս, հանդուրժողաբար էր վերաբերվում Լեոնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատման հեռանկարին¹⁸: Դա խոստովանել է նաև Դրաստամատ Կանայանը 1920թ. մայիսի 21-ին ՀՀ կառավարությանն ուղղված իր հեռագրում. «Հայ գյուղացիների միջոցով անհնար է դիմադրել բոլշևիկներին»¹⁹:

Հարկ է նշել, որ հայկական տարածքներից միայն Լեոնային Ղարաբաղում խորհրդային կարգերը հաստատվեցին համեմատաբար հանգիստ: Վերը նշվածը, անշուշտ, չի նշանակում, թե Ղարաբաղը բացարձակապես ռուսական հակում ուներ և հարմար առիթն օգտագործեց՝ արդեն բացահայտ դրսևորելով իր կողմնորոշումը: Ղարաբաղն ընտրության մեծ հնարավորություն չուներ: Իսկ արցախահայության կողմնորոշումը դեպի խորհրդային կարգերը ավելի ճիշտ կլինի դիտել ոչ թե որպես ռուսամետություն կամ հակաարևմտականություն, այլ պարզապես ընդամենը որպես բուրք-աղբբեջանական վտանգից, ասել է թե՛ ցեղասպանության միանգամայն իրական հեռանկարից զոնե այս կամ այն չափով ապահովագրում: Արդյունքում՝ 1920թ. մայիսի 28-ին՝ Աղբբեջանի խորհրդայնացումից մեկ ամիս անց, Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը Ղարաբաղը հռչակեց խորհրդային:

Եվս մեկ հանգամանք, ՀՀ-ն, ըստ էության, Ղարաբաղի այսպես ասած կամավոր խորհրդայնացումը ստեղծված իրավիճակում լավագույն ելքն էր համարում կամ զոնե՝ չարյաց փոքրագույնը: Բավական է նշել, որ ՀՀ-ում բոլշևիկյան խռովությունը հաջողությամբ ճնշած կառավարության ներկայացուցիչը՝ Դրաստամատ Կանայանը, Ղարաբաղում ոչ միայն համագործակցում էր տեղի հայ բոլշևիկների հետ, այլև այդտեղից հեռանալիս իշխանությունը հանձնեց հայ բոլշևիկներին՝ նրանց թողնելով նաև կապի միջոցներ, գեներ-զինամթերքի զգալի պաշարներ²⁰: Հետաքրքիրն այն է, որ խորհրդայնացման նման խաղաղ տարբերակի դեպքում Թուրքիան ևս Խորհրդային Ռուսաստանից բացահայտ դժգոհելու առիթ չէր ունենա. Ռուսաստանը պարզապես կատարում էր բարի դաշնակցի իր պարտավորությունները (ուղղակի կապ էր ապահովում Թուրքիայի հետ)՝ միաժամանակ առիթ չստեղծելով այդ գործում նրա ակտիվ ներգրավմանը:

¹⁶ Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Եր., 1994, էջ 91:

¹⁷ "Горный Карабах в 1918-1923 гг.", с. 457.

¹⁸ Տե՛ս Գ. Ա. Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեոնային Ղարաբաղում, Եր., 1971, էջ 162-165:

¹⁹ Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 100:

²⁰ Տե՛ս Հ. Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 247:

Մակայն դեպքերի նման զարգացումը բոլորովին էլ չէր համապատասխանում աղբրեջանաթուրքական ծրագրերին. Ղարաբաղի խաղաղ խորհրդայնացման պարագայում, փաստորեն, այլևս առիթ չկար, որ «կարմիր» Աղբրեջանի զորքերը մըտնեին Ղարաբաղ: Մակայն առիթը ստեղծվեց. զարմանալի զուգադիպությամբ հենց այդ պահին Աղբրեջանի տարբեր մասերում սկսվեցին հակախորհրդային խռովություններ: Դրանցից ամնասն չմնացին մակ Ղարաբաղի մահմեդականները²¹: Վերը նշված շարժումների թվում առանձնապես աչքի էր ընկնում Նուրի փաշայի ապստամբությունը և նրա կողմից Գանձակի գրավումը: Այս գործողությունների ընթացքում բուլչևիկները մեծաթիվ զոհեր տվեցին: Խռովարարների դեմ հանվեցին Կարմիր բանակի զորամիավորումները, որոնց շարքերում զգալի թիվ էին կազմում մակ մախկին աղբրեջանական բանակի ասկյարները: Նահանջող Նուրի փաշայի հետքերով այդ զորքերը մտան Աղդամ, ապա շարժվեցին դեպի Շուշի: Այս խռովությունների ղեկավար Նուրի փաշան և նրա համախոհները հետագայում մնացին անպատիժ, իսկ Շուշիում հակախորհրդային խռովություն հրահրող զնդապետ Ջեյնալովը Շուշիից կողոպտած իր հարստությունը պահեց հենց ԱդրխՍՀ բանկերում²²: Այս և այլ հանգամանքներ անուղղակի հաստատում են, որ վերը նշված խռովությունները կազմակերպվել են հենց նույն թուրք-աղբրեջանական կողմի դրրամամբ:

Ղարաբաղի համար այս իրադարձությունների արդյունքը եղավ այն, որ, ի թիվս բնիկ հայկական մի շարք տարածքների, հայտնվեց ոչ հայկական ուժերի վերահսկողության տակ: Մա արդեն նոր փիճակ էր, ինչը փաստաթղթային ձևակերպում ստացավ մեկ-մեկուկես ամիս անց՝ 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրի շրջանակներում:

Н. Г. ОВСЕПЯН — Советизация Нагорного Карабаха, ее исторические условия и последствия.— Процесс советизации в различных армянских районах осуществлялся разными путями. Это было обусловлено активным взаимодействием в регионе ряда факторов: геополитического, национального и и т.п. Своими особенностями особо выделялся процесс советизации Карабаха. Фактически это первая армянская территория, где утвердилась советская власть. Причем это совпадало и с желанием местного населения. И это при том, что в ряде армянских областей процесс советизации не только еще не начинался, но и для определенных внешних сил был нежелателен. Особенности этого процесса отразились и на дальнейшей судьбе Карабаха.

²¹ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 27 հունիսի 1971:

²² Տե՛ս Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը 1917-2000 թթ., մաս I, Եր., 2003, էջ 324: